ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երևան 2019

ԻՄԱՑԻՐ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓԵՏՐՎԱՐ 2019թ.

Այս ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (ԱՄՆ ՄԶԳ): Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....5

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ է հաշմանդամությունը.....6

Ինչ իրավունքներ ունի հաշմանդամություն ունեցող անձը.....6

Ո՞ր օրենքներով են պաշտպանվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները.....7

Ու՞մ կարող է դիմել հաշմանդամություն ունեցող անձն իր իրավունքների պաշտպանության համար.....8

Ինչպե՞ս կարելի է պաշտպանել իրավունքները.....10

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ կարող է դիմել վարչական մարմիններին.....11

Ու՞մ կարող է ներկայացնել բողոքը.....11

Իր իրավունքների պաշտպանության նպատակով ի՞նչը կարող է վիճարկել անձը.....11

Ինչ պետք է պարունակի վարչական բողոքը.....12

Ինչպե՞ս դիմել վարչական մարմիններին.....13

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ իրավունք ունի դիմելու դատական ատյաններին.....13

Ինչպե՞ս դիմել դատական մարմիններին.....14

Ինչ պետք է ներառի հայցադիմումը.....14

Կարող են արդյո՞ք վարչական դատարանի ակտերը բողոքարկվել.....14

Ո՞Ր ԴԵՊՔԵՐՈՒՄ Է ԿԱՐԵԼԻ ՍՏԱՆԱԼ ՀՀ ՔԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնությունից.....14

Ինչ է ներառում անվճար իրավաբանական օգնությունը.....16

Ե՞րբ չի կարող տրվել անվճար իրավաբանական օգնություն.....16

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ իրավունք ունի դիմելու պաշտպանին.....17
Ո՞վ կարող է դիմել պաշտպանին.....17
Ո՞ր դեպքերում է կարելի դիմել պաշտպանին.....17
Ինչ ժամկետներում կարելի է դիմել պաշտպանին.....18
Ինչպե՞ս դիմել պաշտպանին.....19
Ինչ պետք է ներառի Պաշտպանին հասցեագրված դիմումը.....19

Նախաբան

Սույն ուղեցույցը մշակվել է «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և իրականացվում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության[1] կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ: Ուղեցույցը նպատակ ունի բարձրացնել մարդու իրավունքների իրազեկության մակարդակը հասարակությունում:

[1] Սույն ուղեցույցը արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չի ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչ է հաշմանդամությունը

Հաշմանդամությունը ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային երկարաժամկետ խնդիրներ ունեցող անձանց և շրջական միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք է, որը խոչընդոտում է նման խնդիրներ ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:

Ինչ իրավունքներ ունի հաշմանդամություն ունեցող անձը

Յուրաքանչյուր ոք բոլորին հավասար հիմունքներով իրավունք ունի՝

- արժանապատվության պաշտպանության
- կյանքի և վատ վերաբերմունքի չենթարկվելու
- ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության
- անհատական և գույքային ինքնուրույնության
- ինքնուրույն ապրելու, համայնքում ներգրավված լինելու, հասարակական կյանքով ապրելու
- ազատ տեղաշարժվելու
- մտքի, կրոնի, խղճի, ազատ արտահայտման ազատությունների
- հավաքների և միավորման ազատության
- ոլորտին վերաբերող իրավական ակտերի ու քաղաքականության մշակման աշխատանքներին տեղեկացված լինելու և մասնակցելու

- արժանապատիվ գոյությունն ապահովող նվազագույն կենսամակարդակի ապահովման, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության և ապահովության
- որակյալ ներառական կրթության
- խելամիտ հարմարեցումների
- աշխատանքային իրավունքներ
- մշակութային և սպորտային գործունեությանը ներգրավված լինելու
- տեղեկություններ ստանալու
- տարիքին համապատասխան իրավական օգնություն ստանալու
- իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի
- արդարադատության մատչելիության
- մարդու իրավունքների պաշտպանին դիմելու
- հասարակական վայրերի, տրանսպորտի, հաստատությունների հասանելիության
- և այլն:

Կարևոր է իմանալ

Թվարկված իրավունքների ցանկը սպառիչ չէ:

Ո՞ր օրենքներով են պաշտպանվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանվում են հետևյալ իրավական ակտերով՝

- ՀՀ Սահմանադրությամբ՝ 2015 թվականի փոփոխություններով.

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով.
- «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թվականի ՀՀ օրենքով.
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» 2005 թվականի ՀՀ օրենք.
- «Բռնադատվածների մասին» 1994 թվականի ՀՀ օրենքով.
- «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» 1998թվականի ՀՀ օրենքով և այլն:

Կարևոր է իմանալ

Շրջանառության մեջ է դրված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ու՞մ կարող է դիմել հաշմանդամություն ունեցող անձն իր իրավունքների պաշտպանության համար

- **ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությանը**՝ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու հարցերով.
- **ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին**՝ հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման պահանջների պահպանման, նրանց հոժարակամ կամ ոչ հոժարակամ հոսպիտալացման, բուժման և դուրսգրման նկատմամբ վերահսկողության հարցերով.

- **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությանը՝** պետական կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու, կենսաթոշակ վճարելը դադարեցնելու և վերսկսելու նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու, ոլորտի գերատեսչական նորմատիվ ակտեր և պաշտոնական պարզաբանումներ մշակելու և այլ հարցերով.
- **ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը՝** կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական, հոգեբանական և իրավական պաշտպանության, քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձը բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու հարցերով.
- **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝** պետական մարմինների կողմից իրավունքների խախտման, իրավունքների պարզաբանման, օրենսդրական խնդիրների և իրավական ակտերի սահմանադրականության հարցերով.
- **ՀՀ դատական մարմիններին՝** վարչական մարմինների ակտերը, գործողությունները վիճարկելու, իրավունքների պաշտպանության հարցերով.
- **Տեղական ինքնակառավարման մարմիններին՝** համայնքի հասարակական կյանքին մասնակցության խթանման, տեղական ինքնակառավարմանը մասնակցության ապահովման, սոցիալական խնդիրների լուծմանն աջակցություն ստանալու հարցերով.
- **ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին՝** օրենքով նախատեսված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու հարցերով.

- **հասարակական կազմակերպություններին՝** հոգեբանական, տեղեկատվական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն ստանալու հարցերով:

Ինչպե՞ս կարելի է պաշտպանել իրավունքները

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

- իրավունքը ճանաչելով.
- մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով.
- իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով.
- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով.
- դատարանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին հակասող ակտը չկիրառելով.
- իրավունքի ինքնապաշտպանությամբ.
- վնասներ հատուցելով.
- տուժանք բռնագանձելով.
- իրավահարաբերությունը դադարեցնելով կամ փոփոխելով.
- օրենքով նաատեսված այլ եղանակներով:

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ կարող է դիմել վարչական մարմիններին

Վարչական՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների կիրառման իրավունք ունի յուրաքանչյուր ոք:

Ու՞մ կարող է ներկայացնել բողոքը՝

- վարչական մարմնին (նախարարություն, տեսչական մարմին, մարզպետ, քաղաքային կամ գյուղական համայնքի ավագանի ու համայնքի ղեկավար, և այլն) կամ
- վարչական մարմնի վերադաս մարմնին՝ «Վարչարարության կամ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով.

Իր իրավունքների պաշտպանության նպատակով ի՞նչը կարող է վիճարկել անձը

Յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձը, իրավունք ունի բողոքարկելու

- վարչական ակտերը (որոշումը, կարգադրությունը, հրամանը, կամ այլ փաստաթուղթը, որը նախատեսում է պարտականություններ)՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

- վարչական մարմնի գործողությունը՝ այն կատարելու օրվանից 1 ամսվա ընթացքում.
- վարչական մարմնի անգործությունը՝ այն ցուցաբերելու օրվանից 2 ամսվա ընթացքում:
- գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Ի գիտություն՝

Վարչական ակտը վարչական մարմնի կողմից ընդունված այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որն ընդունվել է կոնկրետ գործի կարգավորման նպատակով և սահմանում, փոփոխում,վերացնում կամ ճանաչում է անձանց համար իրավունքներ ու պարտականություններ:

Ինչ պետք է պարունակի վարչական բողոքը

Բողոքը պետք է պարունակի՝

- այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը.
- բողոք բերող անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը.
- բողոքարկման առարկան.
- բողոք բերողի պահանջը.
- բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.
- բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.
- բողոք բերող անձի ստորագրությունը:

Ինչպե՞ս դիմել վարչական մարմիններին

Գրավոր՝

- վարչական մարմնի գրասենյակ դիմում կամ բողոքն անձամբ կամ փոստով հանձնելով.
- էլեկտրոնային փոստով՝ առկայության դեպքում.
- վարչական մարմնի պաշտոնական կայքէջով նախատեսված դիմումի ձևերով:

Կարևոր է իմանալ

Վարչական մարմիններին դիմելը չի կասեցնում դատարան դիմելու համար նախատեսված ժամկետները:

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ իրավունք ունի դիմելու դատական ատյաններին

ՀՀ սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված իրավունքները ոտնահարվելու դեպքում դատարանների միջոցով այդ իրավունքներն արդյունավետ կերպով վերականգնելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք:

Երբ վարչական մարմնի կողմից խախտվել են անձի իրավունքները, անձը իրավունք ունի դիմելու վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

կարգով բողոքարկելու վերաբերյալ.

- գրավոր ապացույցների ցանկը, եթե այդպիսիք կցվում են հայցին.
- դիմող անձի ստորագրությունը.
- հայցադիմումը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

Կարևոր է իմանալ

Դատարան դիմելը **ԱՆՎՃԱՐ ՉԷ**. դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Կարող են արդյո՞ք վարչական դատարանի ակտերը բողոքարկվել

Վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ այնուհետև նաև ՀՀ վճռաբեկ դատարան:

Ո՞Ր ԴԵՊՔԵՐՈՒՄ Է ԿԱՐԵԼԻ ՍՏԱՆԱԼ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ կարող է օգտվել անվճար իրավաբանական օգնությունից

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք.
- հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ներկայացուցիչները:

Կարևոր է իմանալ

Իրավունքների պաշտպանության հարցերով վարչական մարմնին դիմելու հանգամանքը խոչընդոտ չէ նույն հարցի շուրջ դատական մարմիններին դիմելու համար:

Ինչպես դիմել դատական մարմիններին

Գրավոր՝ հայցադիմում կամ դիմում կազմելու միջոցով՝

- հայցադիմումը կամ դիմումը դատարանի գրասենյակ անձամբ կամ փոստով հանձնելով:

Ինչ պետք է ներառի հայցադիմումը

Հայցադիմումը բովանդակում է՝

- նշում այն մասին, որ հայցը ներկայացվում է վարչական դատարան.
- հայցվորի անունը, ազգանունը, բնակության վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից), ներառյալ՝ հայցվորի անձնական տվյալները, նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն.
- պատասխանող վարչական մարմնի անվանումը, գտնվելու վայրը.
- հայցի էության հակիրճ նկարագրությունը.
- այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը.
- հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները.
- հայցվորի պահանջը.
- տեղեկություններ՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության

Ինչ է ներառում անվճար իրավաբանական օգնությունը

- **խորհրդատվություն**՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.
- **ներկայացուցչություն կամ պաշտպանություն դատական գործերի շրջանակներում**՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Ե՞րբ չի կարող տրվել անվճար իրավաբանական օգնություն

- ձեռնարկատիրական և կորպորատիվ բնույթի գործերով.
- մեկ միլիոն դրամը գերազանցող գումարային պահանջով գործերով.

✓ բացառությամբ, երբ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

- առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող հավաստի տվյալներ.
- առկա են հավաստի տվյալներ դիմող անձի վճարունակ լինելու մասին:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ իրավունք ունի դիմելու Պաշտպանին

Պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ 18 տարին չլրացած անձը:

Ո՞վ կարող է դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարող են դիմել՝

- հաշմանդամություն ունեցող անձն անձամբ.
- ծնողը, զավակը կամ այլ մերձավոր ազգականը.
- ներկայացուցիչը, այդ թվում՝ փաստաբանը.
- հասարակական կազմակերպությունը, եթե կա անձի գրավոր համաձայնությունը:

Կարևոր է իմանալ

Պաշտպանին դիմելն **ԱՆՎՃԱՐ Է**:

Ո՞ր դեպքերում է կարելի դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարող են դիմել այն դեպքերում, երբ խախտվել են մարդու իրավունքներն ու ազատությունները՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից.
- պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից.
- հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից:

Ի գիտություն՝ Հանրային ծառայության ոլորտն իր մեջ ներառում է հետևյալ բնագավառները՝

- ✓ էներգետիկայի (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման).
- ✓ ջրային.
- ✓ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության).
- ✓ փոստային կապի.
- ✓ երկաթուղային տրանսպորտի.
- ✓ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման՝ միայն սակագների մասով:

Ինչ ժամկետներում կարելի է դիմել Պաշտպանին

Բողոքը կարող է ներկայացվել **մեկ տարվա ընթացքում** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ վարչական մարմինների կողմից իր իրավունքների խախտման մասին:

Ինչպե՞ս դիմել Պաշտպանին

Գրավոր՝

- ✓ դիմումը Պաշտպանի աշխատակազմ անձամբ կամ փոստով հանձնելով (ք. Երևան, Պուշկինի 56ա).
- ✓ Պաշտպանին կամ նրա աշխատակազմի իրավասու ներկայացուցչին դիմումն առձեռն հանձնելով.
- ✓ էլեկտրոնային փոստով **(ombuds@ombuds.am)**:

Բանավոր՝

- ✓ Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով.
- ✓ աշխատակազմ զանգահարելով (հեռ՝ +374 10 537651)
- ✓ անվճար 116 թեժ գծին զանգահարելով:

Ինչ պետք է ներառի Պաշտպանին հասցեագրված դիմումը

Պաշտպանին հասցեագրված դիմումը պետք է ներառի՝

- դիմողի անունը, ազգանունը, հասցեն.
- նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն.
- հետադարձ կապի տվյալները (հեռախոսահամարը, էլ. հասցեն և այլն).
- խնդրի նկարագրությունը.
- դիմող անձի ստորագրությունը:

Կարևոր է իմանալ

Պաշտպանին դիմելը **ՉԻ ԿԱՍԵՑՆՈՒՄ** դատարան դիմելու համար սահմանված ժամկետները:

Միաժամանակ պետական մարմիններին, բացառությամբ դատարանի, դիմելը չի խոչընդոտում Պաշտպանին հասցեագրված դիմումի քննությանը:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա
Հեռ.՝ +374 10 539271 (քաղաքային)
+374 96 116100 (բջջային)
116 (թեժ գիծ)
Էլ. հասցե՝ ombuds@ombuds.am

WWW.OMBUDS.AM

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+374 285 20116

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ք. Երևան, Զաքյան 2
Հեռ.՝ +374 10 60 07 14 (քաղաքային)
Հասցե՝ Երևան, 0010, Զաքյան 2
Էլ. փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am